5 ՔԱՅԼԵՐ

ՈՐՊԵՍԶԻ ԾԱԾԿՎԱԾ ԼԻՆԵՔ MARKETPLACE-Ի (ՄԱՐԿԵՏՊԼԵՅՍ) ՄԻՋՈՑՈՎ

Ժամանակն է ուսումնասիրել ձեր առողջապահական պլանի ծածկույթը և որոշել, արդյոք ցանկանում եք փոփոխություններ կատարել 2021 թվականի համար: Անպայման ուշադիր կարդացեք այն նամակը, որը ձեզ ուղարկում է ձեր առողջապահական պլանը էլեկտրոնային նամակով՝ տեսնելու համար, թե ինչ փոփոխություններ եք կատարելու ձեր ծածկույթում եկող տարվա համար:

2020 թվականի նոյեմբերի 1-ից 2020 թվականի դեկտեմբերի 15-ը Բաց մասնակցության ժամանակաշրջանում կարող եք նախընտրել մնալ ձեր ներկա պլանում, եթե այն դեռևս առկա է: Որպես այլընտրանք դուք կարող եք ներգրավվել նոր պլանում: Սակայն պետք չէ սպասել դեկտեմբերի 15-ը այն վերջնաժամկետն է, երբ պետք է ընտրեք պլան 2021 թվականի համար: Կատարեք այս 5 քայլերը ծածկույթը պահպանելու համար՝

1 ՈՒՍՈՒՄՆ-ԱՍԻՐՈՒՄ

Ապահովագրական շուկայի (Marketplace) միջոցով առաջարկվող պլանները կարող են փոփոխվել ամեն տարի, ինչպես օրինակ՝ ապահովագրավճարները, ծախսերի բաշխումը և ծածկույթը: Ձեր տվյալները նույնպես կարող են փոփոխված լինել՝ ձեր եկամուտը, ընտանիքը, առողջական վիճակը կամ դեղատոմսերը: Հավաստիացեք, որ ձեր պլանը դեռևս բավարարում է եկող տարվա համար ձեր կարիքները: Եթե չի բավարարում, ապա եկել է պլանը փոխելու ժամանակը:

2 ՆՈՐԱՑՈՒՄ

Սկսած նոյեմբերի 1-ից այցելեք HealthCare.gov կայքը և մուտք կատարեք ձեր Ապահովագրական շուկայի (Marketplace) հաշիվը՝ ձեր 2021 թվականի դիմումը դիտարկելու համար Սա դյուրացնելու համար մենք հնարավոր է դա սկսենք ձեզ համար: Անցեք ձեր դիմումի բոլոր էջերով և նորացրեք ձեր տվյալները: Տվյալները, ինչպես օրինակ ձեր եկամուտը կարող են փոփոխված լինել. **Նույնիսկ եթե ձեր ոչ մի տվյալ չի փոփոխվել դուք կարող եք պայմանունակ լինել ավելի քիչ ծախսերի համար՝ համեմատ անցյալ տարվա, այնպես որ կարևոր է կատարել այս քայլը:** Հաջորդը, ներկայացրեք ձեր դիմումը՝ պայմանունակության վերաբերյալ ձեր ծանուցումը ստանալու համար: Շատ կարևոր է կարդալ ձեր պայմանունակության ծանուցումը: Ծանուցումն ասում է ձեզ, արդյոք ձեզ անհրաժեշտ է կարդալ ավելի շատ փաստաթղթեր կամ արդյոք ձեր խնայումները փոփոխվել են: Դուք նաև կարող եք զանգահարել Ապահովագրական շուկայի (Marketplace) տեղեկատու կենտրոն 1-800-318-2596 (TTY՝ 1-855-889-4325) հեռախոսահամարով՝ հեռախոսով ուսումնասիրության կամ նորացումներ կատարելու համար:

3 ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ձեր պայմանունակության մասին հայտարարությունը HealthCare.gov կայքում ուսումնասիրելուց հետո, դուք կտեսնեք այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկեք՝ ձեր մասնակցության ուղղված քայլերը եզրափակելու համար: Ահա թե որտեղ եք համեմատում պլանները, ծախսերը և նպաստները 2021 թվականի համար: Կարևոր է ժամանակ հատկացնել պլաններ ուսումնասիրելուն, քանի 2021 թվականի համար ձեր տարածքում հնարավոր է առկա լինեն նոր պլաններ: Եթե ցանկանում եք մնալ նույն պլանի շրջանակներում և այն դեռևս առկա է 2021 թվականին, դուք այն (կամ դրա նմանատիպը) կտեսնեք գունավորված՝ ձեր պլանների որոնման արդյունքների վերևում: Պլանները համեմատելու համար նշեք «Համեմատել և պահպանել» (“Compare & Save”) վանդակը, որը գտնվում է ձեր պահպանված պլանի կողքին:

4 ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրեք առողջապահական պլան: Դուք կարող եք ընտրեք ձեր ներկա պլանը, եթե այն դեռևս առկա է 2021 թվականի համար, կամ ընտրել նոր պլան:

5 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄ

Մասնակցությունը առցանց կամ հեռախոսով ամրագրելուց հետո կապ հաստատեք ձեր պլանի յետ՝ ձեր մասնակցությունը հաստատելու համար: Անպայման ամեն ամիս վճարեք ձեր ապահովագրավճարը՝ ծածկույթը շարունակելու համար:

ՔԱՅԼ 1 Ուսումնասիրություն՝ Ինչ պետք է հիշել՝

- Փոստում փնտրեք նամակ ձեր առողջապահական պլանից, որը նկարագրում է պլանի որևէ փոփոխություններ:
- Կարդացեք նամակը և կապ հաստատեք ձեր առողջապահական պլանի հետ՝ հարցեր ունենալու դեպքում:
- Գրի առեք կարևոր ամսաթվերը և տվյալները:

ՔԱՅԼ 2 Նորացում՝ Հիշելու բաներ՝

- Եթե չնորացնեք ձեր դիմումի տվյալները, ինչպես օրինակ՝ ձեր եկամտի փոփոխությունները, հնարավոր է, որ չկարողանաք ապահովել ճիշտ խնայողությունները: Նույնիսկ փոքր փոփոխությունը կարող է ազդել ձեր պայմանաթնակության վրա, այնպես որ հավաստիացեք, որ ձեր տվյալներն արդիական են:
- Ձեր դիմումը ներկայացնելուց հետո ուշադիր կարդացեք ձեր պայմանունակության մասին ծանուցագիրը: Նույնիսկ եթե ձեր տվյալները չեն փոփոխվել, դուք կարող եք ստանալ ծախսերի այլ խնայողություն Ապահովագրությունների շուկայում (Marketplace) փոփոխությունների պատճառով:

ՔԱՅԼ 3 Համեմատություն՝ Պլանները համեմատելիս հաշվի առեք՝

- Ձեզ գոհա՞ցնում են ձեր ներկա պլանի փոփոխությունները: Պլանները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի և այդ փոփոխություններից մի քանիսը կարող են ազդել այն բանի վրա, թե որ բժիշկներից, դեղատներից և դեղատոմսերից կարող եք օգտվել:
- Որո՞նք կլինեն ձեր նպաստները և ծախսերը:
- Արդյոք առկա՞ են նոր տարբերակներ: Ձեզ հասանելի կարող են լինել պլաններ, որոնք անցյալ տարի չեն առաջարկվել:
- Պլանները համեմատելիս կտեսնեք, արդյոք այն պլանները, որոնցում հետաքարքրված եք ծածկում են կոնկրետ բժիշկների, դեղատոմսով բաց թողնվող դեղերը և հաստատությունները, ինչպես օրինակ՝ հիվանդանոցները և դեղատները: Դուք նաև կարող եք ֆիլտրել պլանները՝ կախված բժիշկներից, դեղերից և հաստատություններից:

Ավարտեք բոլոր 5 քայլերը՝ ձեզ համար ամենալավ ծածկույթն ապահովելու համար:

Մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը այս բոլոր քայլերը չավարտելու դեպքում Ապոհովագրական շուկան (Marketplace) կարող է ձեզ ավտոմատ կերպով գրանցել, այնպես որ ձեր ծածկույթը շարունակվի 2021 թվականին: Սակայն այս ծածկույթը կարող է չլինել ձեր լավագույն տարբերակը և հնարավոր է, որ դուք չօգտվեք ծախսերի խնայողություններից:

Օգնության կարիք ունե՞ք

Հարցեր կամ օգնության կարիք ունենալու դեպքում՝

- Զանգահարեք Ապահովագրական շուկայի (Marketplace) տեղեկատու կենտրոն 1-800-318-2596 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով: Ասեք նրանց, որ օգնության կարիք ունեք այս 5 Քայլերի առնչությամբ:
- Այցելեք Localhelp.HealthCare.gov կայքէջը: Դուք կարող եք գտնել ինչ-որ մեկին, ով անձամբ կարող է օգնել ձեզ:.

ՔԱՅԼ 4 Ընտրություն՝ Հիշեք հետևյալ կետերը՝

- Դուք կարող եք ընտրել ձեր տարածքում 2021 թվականին ձեզ հասանելի ցանկացած պլան, անկախ նրանից, թե ինչ պլան եք ունեցել 2020 թվականին:
- Դուք կարող եք օգտվել որևէ խնայողություններից (եթե պայմանունակ եք), միայն եթե մասնակցեք Ապահովագրական շուկայի (Marketplace) պլանին:
- Եթե ձեր ապահովագրական ընկերությունը ձեր տարածքում 2021 թվականին ձեզ հասանելի պլան չի առաջարկում Ապոհովագրական շուկայի (Marketplace) միջոցով, ապա ձեզ կարող է համապատասխանեցվի այլընտրանքային պլան: Դուք կստանաք նամակ, որում նկարագրվում են քայլերը, որոնք կարող եք ձեռնարկել

ՔԱՅԼ 5 Մասնակցության ամրագրումը – Հիշեք հետևյալ կետերը՝

- Եթե առողջապահական ծածկույթ եք ցանկանում՝ 2021 թվականի համար դուք պետք է ամրագրեք մասնակցությունը որևէ պլանում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը՝ Մասնակցության ամրագրման բաց ժամանակաշրջանի ավարտը: Այս ամսաթվից հետո դուք ձեր պլանը փոխելու հնարավորություն չեք ունենա, բացառությամբ դեպքի, երբ պայմանունակ լինեք Մասնակցության ամրագրման հատուկ ժամանակաշրջանի համար:
- Եթե ցանկանում եք, որպեսզի ձեր առողջապահական ծածկույթի հաշվարկը ժամանակին սկսվի, անպայման վճարեք ձեր առաջին ապահովագրավճարը: Դուք ձեր ծածկույթի ամփոփագիրը կտեսնեք «Իմ պլանները և ծրագրերը» (“My Plans & Programs.”) բաժնում:
- Անպայման ձեր տվյալների որևէ նորացումների մասին հայտնեք Ապահովագրական շուկային (Marketplace): Դուք պետք է հայտնեք ընտանեկան դրության փոփոխության մասին (ինչպես օրինակ՝ ամուսնության, երեխա ունենալու կամ առողջապահական ծածկույթը կորցնելու մասին) 30 օրվա ընթացքում՝ ապահովելու համար ձեր ծածկույթի տվյալների արդիականությունը:

Դուք իրավունք ունեք ստանալու Ապահովագրական շուկայի (Marketplace) մասին տեղեկատվություն մատչելի ձևաչափով, օրինակ՝ մեծ տառերով տպված, Բռայլի այբուբենով կամ ձայնագրությամբ: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք CMS.gov/about-cms/agency-Information/aboutwebsite/cmsnondiscriminationnotice.html կայքէջը կամ զանգահարեք Ապահովագրական շուկայի (Marketplace) տեղեկատու կենտրոն 1-800-318-2596 հեռախոսահամարով լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-855-889-4325 հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից: